ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.02.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/15

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Միասնական սոցիալական ծառայություն
Մասնակից՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Միասնական սոցիալական ծառայության ներկայացուցիչ՝ Գ. Ջանջուղազյանի
«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Կ. Ադամյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, տպագրության և առաքման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.01.2022թ.-ի թիվ 26/26-1/439-2022 գրությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Միասնական սոցիալական ծառայության 03.01.2022թ.-ի թիվ 02/ԳՋ/176-2022 գրության հիման վրա, 11.01.2022թ.-ին «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 11.01.2022թ.-ին:

12.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2022/15 համարի ծածկագիրը:

19.01.2022թ.-ին և 10.02.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.02.2022թ.-ին:

2. Միասնական սոցիալական ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Միասնական սոցիալական ծառայությունը 03.01.2022թ.-ի թիվ 02/ԳՋ/176-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ (այսուհետ նաև՝ Պատվիրատու) հայտնելով հետևյալը.

«2021 թվականի հունվարի 21-ին Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3 ծածկագրով հայտարարվել է Ծառայության կարիքների համար տպագրման և առաքման ծառայությունների գնման ընթացակարգ:

Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով վեց կազմակերպություն՝ այդ թվում «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն):

Գնահատող հանձնաժողովի 2021թ. նոյեմբերի 16-ի որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից:

2021 թվականի նոյեմբերի 29-ին «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/88 որոշմամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժվել է, որից հետո (eauction.armeps.am) համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում Ընկերությանը ուղարկվել է ծանուցում պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Ծանուցումը ստանալուց հետո Ընկերությունը հրավեր 1-ին մասի 9.3 կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Գնահատող հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 30-ի որոշմամբ ՄՄԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգը հայտերարվել է չկայացած Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեզ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք տալու համար:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՄՄԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 12.01.2022թ.-ի գրությամբ դիմել է «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.01.2022թ.-ի թիվ 26/26-1/439-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն 17.01.2022թ.-ին ներկայացրած թիվ Ա.Դ 2022-05 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի համար հիմք է հանդիսացել Միասնական սոցիալական ծառայության 03.01.2022թ.-ի թիվ 02/ԳՋ/176-2022 գրությունը և ՀՀ ֆինանսների նախարարության 11.01.2022թ.-ին թիվ 26/26-1/439-2022 գրությունը, որով ՄՄԾ հայտնել է, որ մեջբերում եմ՝ «2021 թվականի հունվարի 21-ին Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կողմից ՄՄԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3 ծածկագրով հայտարարվել է Ծառայության կարիքների համար տպագրման և առաքման ծառայությունների գնման ընթացակարգ (ընթացակարգը հայտարարվել է 2021թ-ի նոյեմբերի 2-ին, կցվում է, ֆայլ N 1): Գնման ընթացակարգի շրջանակում հայտեր են ներկայացրել թվով վեց կազմակերպություն՝ այդ թվում «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն): Գնահատող հանձնաժողովի 2021թ. նոյեմբերի 16- ի որոշմամբ Ընկերությունը ճանաչվել է ընտրված մասնակից: 2021 թվականի նոյեմբերի 29-ին «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է բողոք: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/88 որոշմամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժվել է, որից հետո (eauction.armeps.am) համակարգի միջոցով հրավերով սահմանված ժամկետում Ընկերությանը ուղարկվել է ծանուցում պայմանագիր կնքելու վերաբերյալ: Ծանուցումը ստանալուց հետո Ընկերությունը հրավերի 1-ին մասի 9.3 կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և Պատվիրատուին չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները: Գնահատող հանձնաժողովի 2021թ. դեկտեմբերի 30-ի որոշմամբ ՄՄԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3 ծածկագրով գնման ընթացակարգը հայտերարվել է չկայացած Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեզ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 45-րդ կետի պահանջներին համապատասխան սահմանված կարգով ընթացք տալու համար»:

Հայտնում եմ, որ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն), Միասնական սոցիալական ծառայության «ՄՄԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից, վերոնշյալ աճուրի արդյունքներով առաջին տեղ զբաղեցրած մասնակից չճանաչելու և պայմանագիր կնքելու որոշման դեմ ներկայացվել է հետևյալ բողոքը.

«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն 11.11.2021 թ.-ին մասնակցել է Միասնական սոցիալական ծառայության կողմից հայտարարած «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ նաև՝ Աճուրդ): Աճուրդի մասնակցության սկզբնական գինը Ընկերության կողմից եղել է 5280000 (հինգ միլիոն երկու հարյուր ութանասուն հազար) ՀՀ դրամ: Աճուրդի մեկնարկային գինը սահմանվել է 4320000 (չորս միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ (կցվում է, ֆաիլ N 2): Աճուրդը սկսվելուց հետո գնի նվազեցման քայլի առաջին մինիմալ շեմը սահմանվել է 4270000 (չորս մի[հոն երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամը : Ընկերությունը կատարել է աճուրդի գնի նվազեցման քայլի մինիմալ շեմի չափով քայլ՝ 4270000դրամ, սակայն e-auction համակարգի տեխնիկական խնդիրների պատճառով մեկ 0 նիշը պակաս է մուտքագրվել համակարգ և Ընկերության կողմից ներկայացված գինը 4 270 000 դրամի փոխարեն ստացվել է 427 000 դրամ:

Խնդիրը կայանում է նրանում (այս հիմնավորումները նախկինում չի ներկայացվել), որ աճուդը սկսելուց դեռ 20 րոպե առաջ Ընկերության աշխատակիցը անընդհատ փորձել է մուտք գործել e-auction համակարգ սակայն հնարավոր չի եղել, քանի որ e-auction համակարգը խափանված է եղել և ամեն անգամ մուտք գործելիս գրում էր https://eauction.armeps.am/en/user/login/ nginx error! (խափանման հիմնավորումները կցվում են, ֆայլ N 3): Երբ արդեն հանարավոր եղավ մուտք գործել e-auction հանակարգ աճուրդը արդեն սկսված էր, (աճուդի քայլը հարկավոր է կատարել 5 րոպեի ընթացքում, իսկ երբ մենք վերջապես մուտք գործեցինք e-auction համակարգ մեր կողմից առաջարկվող գինը ներկայացնելու համար մնացել էր մոտ 1 րոպե) սակայն e-auction համակարգը կախել էր, այսինքն ցույց էր տալիս Աճուրդը և չափաբաժինը (Աճուրդը բաղկացած էր ընդամենը 1 չափաբաժնից) սակայն մեր կողմից մուտքագրված գումարը չեր ընդունում, իսկ Աճուրդի չափաբաժնի ժամանակացույցը կախվել էր, ցույց էր տալից 1 րոպե 10 վարկյան և չեր փոփոխվում: Ընկերության աշխատակցի կողմից անընդհատ մուտք էր արվում մեր կողմից առաջարկվող գինը՝ 4 270 000 դրամ, սեղմում էր ուղարկել կոճակը, սակայն համակարգը չեր ընդունում և ժամանակացույցը կանգնած էր միշտ 1 րոպե 10 վարկյանի վրա: Անընդհատ սեղմում էինք նաև ձախ անկյունի վրա գտնվող կոճակը, որը պետք է թարմացներ համակարգը, սակայն ոչինչ տեղի չեր ունենում: Մեր կողմից առաջարկվող գինը մուտքագրում էինք անընդհատ, սակայն ամեն ուղարկել կոճակը սեղմելիս գումարը ջնջվում էր և նորից մուտքագրում էինք և նորից սեղմում ուղարկել կոճակը, կամ հասնում էր հաստատման կոճակին, սակայն հաստատել կոճակը չեր ընդունում: Այդ պահին լարված վիճակ էր Ընկերության աշխատակցի մոտ և ժամանակ չեր ունեցել ֆոտոնկարել, կամ

տեսանկարահանել e-auction համակարգի տեխնիկական խնդիրները (կարողացել էր ֆոտոնկարել միայն մինչև համակարգ մուտք գործելու ժամանակ առաջացած խնդիրը, որը կցված է ֆայլ N 3-ում): Աճուրդի չափաբաժնի ավարտից մի քանի վարկյան առաջ համակարգը միացավ և անհասկանալի ձևով նշվեց որ վերջնական գինը մեր կողմից առաջարկվածն է և այն 427 000 դրամ է (հետագայում տնօրենի հանձնարարությամբ Ընկերության աշխատակիցը ֆոտոնկարել և տեսանկարահանել է «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ կողմից e-auction համակարգի միջոցով մասնակցած մեկ այլ աճուրդի ժամանակ e-auction համակարգի նմանատիպ խափանման դեպքը, որը ներկայացնում ենք որպես մեր կողմից նշված՝ «ՄՄԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» աճուրդի ժամանակ eauction համակարգի նմանատիպ խափանման հիմնավորում, կցված է ֆայլ N 3-ում):

Ընկերությունը գրությամբ դիմել է պատվիրատուին՝ մրցույթի հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական կայքին գրություն ուղարկելով, ներկայացնելով առաջ եկած խնդիրը, մեջբերում եմ՝

Խնդրում եմ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից 11.11.2021թ-ի «ՄՄԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին ներկայացված գինը 427 000 (չորս հարյուր քսանյոթ հազար) ՀՀ դրամի փոխարեն կարդալ 4270000 (չորս միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Որպես հիմնավորում գնի տեխնիկական պատճառով նվազեցման ներկայացվել է, որ 60 000 հատ Կենսաթոշակի գործի կազմի (թուղթ կավճապատ /ֆուտբոր/՝ 300գ/մ.ք, բացված չափերը 47x32սմ) տպագրության համար պահանջվում է մոտ 3150կգ. թուղթ, որի մեկ կիլոգրամի շուկայական արժեքը միջինը 1100 դրամ է (կցվում է թուղթ վաճառող ընկերությունների կողմից տրամադրված, վերնշյալ մրցույթի շրջանակում տպագրության համար պահանջվող թղթի՝ 1 կգ-ի վաճառքի գները ֆայլ N 4): Այսպիսով՝ 3150կգ^1100դր.=3 465 000դր. (սա միայն թղթի մասով, դրան գումարվում է նաև այլ տպագրական ծախսեր՝ ներկ, ֆորմաներ, էլ. էներգիա, աշխատավարձ, տրանսպորտային ծախսեր, հարկեր և այլն):

Համաձայն «ՄՄԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերի 1-ին մասի 5.1 կետի, մեջբերում եմ՝ «5.1 Առաջարկվող գինը աշխատանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից:»: Տվյալ դեպքում 4 270 000 դրամ արժողությամբ տպագրական աշխատանքների վերոնշյալ ինքնարժեքը չի կարող մտնել eauction համակարգի խափանման արդյունքում ստացված գնի՝ 427 000 դրամի մեջ:

Որպես հիմնավորում ներկայացնեմ նաև հետևյալ հանգամանքը.

«Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից աճուրդի մասնակցության սկզբնական գինը ինչպես նշեցի 5280000 ՀՀ դրամ է և տրամաբանական չէ 5 280 000 դրամից մեկ քայլով (Աճուրդի ժամանակ որևէ մասնակից նվազեցման քայլ չի կատարել) նվազեցնել մինչև 427 000դրամ (Պատվիրատուի կողմից նախահաշվային գինը սահմանված էր 3 240 000դրամ): Նշեմ նաև, որ երկրորդ տեղը զբաղեցրած մասնակցի առաջարկած գինը՝ 4 320 000 դրամ է, երորդ տեղինը՝ 4590000 դրամ, չորորդ տեղինը՝ 5034000 դրամ, հինգերորդ տեղինը՝ 5232500 դրամ, վեցերորդ տեղինը՝ 6900000 դրամ: Բոլոր մասնակիցների կողմից տեղի է ունեցել նախահաշվային գնի գերազանցում և բոլոր մասնակիցների կարգավիճակը համակարգում նշված է՝ մերժված (կցվում է «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները՝ e-auction համակարգից արտատպված, ֆայլ N 5):

Հիմք ընդունելով վերոնշյալ հիմնավորումները և հաշվի առնելով, որ խնդիրը առաջացել է e-auction համակարգի խափանման պատճառով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.01.2022թ.-ին թիվ 26/26-1/439-2022 գրությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը մերժել:»:

4. <u>ՍՑ-LO-2022/15 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Միասնական սոցիալական ծառայության կողմից տպագրության և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.11.2021թ.-ին հայտարարվել է «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն:

Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված

մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 16.11.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակից է ճանաչվել «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն:

iv. 16.11.2021թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 10 օրացուցային օր:

v. «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն 29.11.2021թ.-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոք և խնդրել է արգելել Պատվիրատու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները՝ ընդհուպ մինչև պայմանագիր կնքելու գործընթացը: Պարտավորեցնել Պատվիրատու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայութան «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անվավեր ճանաչել 12.11.2021թ. ժամը 10:15-ի թիվ 2 արձանագրության 1-ին կետի բ) ենթակետով Բողոքաբերի կողմից ներկայացված 427 000 դրամի մասով տողը: Պարտավորեցնել Պատվիրատու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայութան «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 12.11.2021թ. ժամը 10:15-ի թիվ 2 արձանագրության 1-ին կետի բ) ենթակետով Բողոքաբերի կողմից ներկայացված գնային առաջարկի տողում, որպես վերջինիս առաջարկած գին սահմանել 4.270.000 դրամը: Պարտավորեցնել Պատվիրատու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայութան «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անվավեր ճանաչել 16.11.2021թ. ժամը 11:40-ի թիվ 3 արձանագրությունը:

vi. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանը 08.12.2021թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/88 որոշմամբ (հրապարակվել է www.gnumner.am կայքում 10.12.2021թ.-ին) որոշել է «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից 29.11.2021թ.-ին ներկայացված բողոքը մերժել:

vii. Պատվիրատուն 13.12.2021թ.-ին eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացնելով «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով պայմանագրի նախագիծը՝ հայտնել է, որ «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով տպագրման և առաքման ծառայություններ գնման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2021թ.-ի նոյեմբերի 16-ի որոշմամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն ճանաչվել է որպես ընտրված մասնակից: Պայմանագիրը Մասնակցի հետ կարող է կնքվել «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու դեպքում: Միաժամանակ խնդրել են հրավերով սահմանված ժամկետում՝ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո կից գրությամբ ներկայացնել պայմանագրի և որակավորման ապահովումները և Մասնակցի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված պայմանագրի օրինակը ներկայացնել համակարգով, կամ Մասնակցի կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները:

viii. Հանձնաժողովի 30.12.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը ստանալուց հետո հրավերի 1-ին մասի 9.3-րդ կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.01.2022թ.-ի թիվ 26/26-1/439-2022 գրությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Կենտրոնացված կարգով սննդամթերքի գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը

հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, կենտրոնացված կարգով սննդամթերքի գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է

որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Միասնական սոցիալական ծառայության կողմից տպագրության և առաքման ծառայությունների ձեռքբերման նպատակով 02.11.2021թ.-ին հայտարարված «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.11.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ ընտրված մասնակից է ճանաչվել «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն: Սակայն «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն 29.11.2021թ.-ին ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոք և խնդրել է արգելել Պատվիրատու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները՝ ընդհուպ մինչև պայմանագիր կնքելու գործընթացը: Պարտավորեցնել Պատվիրատու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայութան «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անվավեր ճանաչել 12.11.2021թ. ժամը 10:15-ի թիվ 2 արձանագրության 1-ին կետի բ) ենթակետով Բողոքաբերի կողմից ներկայացված 427 000 դրամի մասով տողը:

Պարտավորեցնել Պատվիրատու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին 12.11.2021թ. ժամը 10:15-ի թիվ 2 արձանագրության 1-ին կետի բ) ենթակետով Բողոքաբերի կողմից ներկայացված գնային առաջարկի տողում, որպես վերջինիս առաջարկած գին սահմանել 4.270.000 դրամը: Պարտավորեցնել Պատվիրատու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին անվավեր ճանաչել 16.11.2021թ. ժամը 11:40-ի թիվ 3 արձանագրությունը: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանը 08.12.2021թ.-ին կայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/88 որոշմամբ (հրապարակվել է www.gnumner.am կայքում 10.12.2021թ.-ին) որոշել է «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից 29.11.2021թ.-ին ներկայացված բողոքը մերժել: Դրանից հետո Պատվիրատուն 13.12.2021թ.-ին eauction.armeps.am համակարգի միջոցով Մասնակցին ներկայացրել է «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով պայմանագրի նախագիծը և հայտնել է, որ պայմանագիրը Մասնակցի հետ կարող է կնքվել «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու դեպքում: Սակայն Հանձնաժողովի 30.12.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն պայմանագիր կնքելու մասին ծանուցումը ստանալուց հետո հրավերի 1-ին մասի 9.3-րդ կետով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչի արդյունքում Հանձնաժողովը որոշել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՄՍԾ ԷԱՃԱՇՁԲ-22/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել որակավորման ապահովում:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, ինչպես նաև հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.01.2022թ.-ի թիվ 26/26-1/439-2022 գրությամբ «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/15 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Հարդ ընդ Սոֆթ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**